# ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

## § 3. ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

**1** Միտաննիի դեմ պատերազմից հետո, տունդարձի ճանապարհին, Թութմոս 3-րդը Սիրիայում կազմակերպում է փղերի որս: Որսի ընթացքում սպանվում է 120 փիղ: Երբ փարավոնը հարձակվում է փղերից մեկի վրա, քիչ է մնում փիղը կնճիթով բռնի նրան, բայց նա հրաշքով փրկվում է իր զինվորի շնորհիվ, որը ժամանակին օգնության հասնելով՝ կտրում է փղի կնճիթը:

**2** Եգիպտացիները սովորաբար սնվում էին օրական երեք անգամ, սիրում էին միս ու որսամիս: Ձուկը հազվադեպ էր օգտագործվում սննդի մեջ: Սեղանի զարդն էին բանջարեղենը, սոխը, սխտորը: Մրգերից գերակշռում էին թուզն ու արմավը:

Եգիպտացիների հիմնական ըմպելիքը գարեջուրն էր: Կար դրա առնվազն տասներկու տեսակ՝ թույլից մինչև թունդ: Շատ էր գնահատվում գինին, բայց այն թանկ արժեր և մատչելի էր միայն ունևորներին:

Եգիպտացիները ընտելացրել էին ***կատուներին*** և դրանց պահում էին տներում: Չէ՞ որ կատուն խիստ օգտակար կենդանի էր, պաշտպանում էր եգիպտացու բերքի պաշարները կրծողներից: Երբ կատուն սատկում էր, նրա համար սուգ էին անում: